ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ԳԵՂԱՐՔՈՒՆԻՔԻ ՄԱՐԶՊԵՏ
ՈՐՈՇՈՒՄ

N 155 - Ա
10 սեպտեմբերի 2014 թ.

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԳԵՂԱՐՔՈՒՆԻՔԻ ՄԱՐԶՊԵՏԻ 2012 ԹՎԱԿԱՆԻ ՀՈԿՏԵՄԲԵՐԻ 30-Ի N 223-Ա ՈՐՈՇՄԱՆ ՄԵՋ ԼՐԱՑՈՒՄ ԵՎ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով ,,Իրավական ակտերի մասին,, Հայաստանի Հանրապետության օրենքի 70-րդ հոդվածի 1-ին մասի և Հայաստանի Հանրապետության Նախագահի 1997 թվականի մայիսի 6-ի ՆՀ 728 հրամանագրի 1.6-րդ կետի դրույթներով

որոշում եմ՝

1. Հայաստանի Հանրապետության Գեղարքունիքի մարզպետի 2012 թվականի հոկտեմբերի 30-ի <<Աղետների ռիսկերի նվազեցման Գեղարքունիքի մարզային թիմ ստեղծելու մասին>> N 223-Ա որոշման մեջ կատարել հետևյալ լրացումը և փոփոխությունը՝

1) որոշման 2-րդ կետից հետո լրացնել նոր 2.1. կետը հետևյալ բովանդակությամբ՝

<<2.1. Աղետների ռիսկերի նվազեցմանԳեղարքունիքի մարզային թիմի գործունեության համակարգումը վերապահել մարզպետի տեղակալ Կարեն Հակոբյանին:>>.

2) որոշման 2-րդ կետով հաստատված հավելվածի 10-րդ կետում <<քարտուղարության ընդհանուր բաժնի առաջատար մասնագետ>> բառերը փոխարինել <<քարտուղարության պետ>> բառերով:

2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ստորագրման պահից:

ՄԱՐԶՊԵՏ՝ Ռ. ԳՐԻԳՈՐՅԱՆ